ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր օկտավաներն են շրջապատում փոքր օկտավան.**

1) կոնտր և սուբկոնտր օկտավաները
2) առաջին և երկրորդ օկտավաները
3) մեծ և առաջին օկտավաները
4) մեծ և կոնտր օկտավաները

2 **Որո՞նք են նոտագրությունը կրճատող և պարզեցնող նշանները.**

1) էքսպոզիցիա, ռեպրիզա
2) արպեջատո, ստակկատո
3) վոլտա, կոդա
4) տրեմոլո, ռեպրիզա

3 **Ինչպե՞ս է կոչվում հնչման աստիճանաբար մեղմացումը երաժշտության մեջ.**

1) սֆորցանդո
2) կրեշչենդո
3) դիմինուենդո
4) պիանիսիմո

4 **Ինտերվալներն ունեն երկու մեծություն.**

1) հիմնական և օժանդակ
2) աստիճանային և տոնային
3) բացարձակ և հարաբերական
4) հիմնական և լրացուցիչ

5 **Ո՞ր շարքում է թվարկված ինտերվալների ճիշտ հաջորդականությունը.**

1) սեկունդա, տերցիա, կվինտա
2) կվինտա, սեքստա, սեպտիմա
3) պրիմա, տերցիա, կվարտա
4) կվարտա, սեպտիմա, օկտավա

6 **Մաժորի և մինորի զույգ տոնայնությունները լինում են.**

1) զուգահեռ, ազգակից, համանուն
2) համանուն, դիատոնիկ, խրոմատիկ
3) զուգահեռ, համանուն, էնհարմոնիկ հավասար
4) դիատոնիկ, էնհարմոնիկ հավասար, խրոմատիկ

7 **Համանուն տոնյանություններն ունեն**

1) միևնույն տոնիկաներ, բանալու տարբեր նշաններ, տարբեր հնչյունաշարեր
2) բանալու միևնույն նշաններ, տարբեր տոնիկաներ, տարբեր հնչյունաշարեր
3) միևնույն հնչողություն, տարբեր գրություն և տարբեր նշանակություն
4) միևնույն տոնիկաներ, միևնույն հնչյունաշարեր, տարբեր կառուցվածքներ

8 **Տոնայնական փոխհարաբերությունների տեսակներն են.**

1) մոդուլյացիա (զարտուղում), շեղում, հակադրում
2) շեղում, մոդուլյացիա (զարտուղում), տրանսպոզիցիա
3) համադրում, հակադրում, փոխադրում
4) շեղում, մոդուլյացիա (զարտուղում), համադրում

9 **Ինտերվալ /intervallum/ թարգմանաբար նշանակում է**

1) բարձրություն
2) փոխհարաբերություն
3) տարածություն
4) զուգակցություն

10 **Մաժորում տոնիկական եռահնչյունն ունի հետևյալ կառուցվածքը.**

1) փ.3 +մ.3
2) մ.3 +մծց.3
3) մ.3 +մ.3
4) մ.3 + փ.3

11 **Հարմոնիկ մինորում ...**

1) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 6-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով
2) վերընթաց շարժման ժամանակ 6-րդ և 7-րդ աստիճանները բարձրանում են կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում
3) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով
4) վերընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում

12 **Ինչպե՞ս գրառել հնչյունի տևողությունը, եթե այն տևում է քառորդ + ութերորդական.**

1) քառորդ պաուզայով
2) քառորդ կետով
3) կես նոտա
4) երկու քառորդ կետով

13 **Դասական ֆուգաները սովորաբար ունեն**

1) միամաս կառուցվածք
2) քառամաս կառուցվածք
3) երկմաս կամ եռամաս կառուցվածք
4) երկմաս կառուցվածք

14 **Ո՞ր ձայնաստիճանը ցույց տվող ձեռքի նշանն է ցուցադրված տվյալ նկարում.**

1) դո
2) լա
3) սի
4) սո

15 **Երաժշտական ո՞ր ձևն է հիմնվում երկու հակադիր կերպարային ոլորտների վրա.**

1) ռոնդո ձև
2) վարիացիոն ձև
3) սոնատային ձև
4) ռոնդո-սոնատային ձև

16 **Այն չափերը, որոնք առաջանում են միանման պարզ չափերից, կոչվում են**

1) բարդ խառը չափեր
2) փոփոխական չափեր
3) բարդ չափեր
4) մեջընդմիջվող չափեր

17 **Պարզ երկմաս ձևը լինում է**

1) ռեպրիզայով և առանց ռեպրիզայի
2) միատոնայնական և զարտուղող
3) նորմատիվ և ոչ նորմատիվ
4) մոնոթեմատիկ և բազմաթեմատիկ

18 **Հայկական ժողովրդական երգարվեստում ինչպե՞ս է կոչվում մեծացրած սեկունդայով ձայնակարգը (լադը).**

1) միքսոլիդիական
2) էոլական
3) դորիական
4) հարմոնիկ կամ երկակի

19 **Նշել ճիշտ տողը, որտեղ առկա են հայկական ժողովրդական երգերին բնորոշ օժանդակ հենակետերը.**

1) տերցիային, կվարտային, կվինտային
2) տերցիային, կվինտային, սեքստային
3) կվարտային, սեքստային, սեպտիմային
4) սեկունդային, կվարտային, սեպտիմային

20 **Միքսոլիդիական մաժորը ո՞ր ձայնաստիճանով է տարբերվում բնական մաժորից.**

1) բարձր չորրորդ
2) բարձր վեցերորդ
3) ցած յոթերորդ
4) ցած երկրորդ

21 **Ինչո՞վ պայմանավորված չէ ժողովրդական երգարվեստում երաժշտական լեզվի ինքնատիպությունը.**

1) ազգային երաժշտական լեզվամտածողությամբ
2) ժողովրդի աշխարհայացքով
3) այլազգի երաժշտության ազդեցությամբ
4) ժողովրդի կենցաղով և պատմական իրադարձություններով

22 **Նշված երգերից ո՞րն է հեղինակել Կոմիտաս վարդապետը.**

1) Գարուն ա
2) Կանչե կռունկ
3) Կաքավի երգը
4) Խնկի ծառ

23 **Նշված ձայնակարգերից (լադերից) ո՞րը մաժոր չէ.**

1) էոլական
2) իոնական
3) միքսոլիդիական
4) լիդիական

24 **Ի՞նչ է վանկի եղանակավորումը ժողովրդական երգերում.**

1) վանկի կտրուկ արտաբերում
2) վանկի անշտապ, ծոր տալով արտաբերում
3) հնչման ուժգնացումը վանկի արտաբերման ժամանակ
4) հնչման մեղմացումը վանկի արտաբերման ժամանակ

25 **Նշվածներից ո՞րն է երաժշտական իմաստային և կառուցվածքային ամենափոքր միավորը.**

1) ֆրազ
2) մոտիվ
3) նախադասություն
4) պարբերություն

26 **Նշել ճիշտ տողը, որտեղ նշվածը մոտիվ չէ.**

1) յամբ
2) քորեյ
3) ամֆիբրախիական
4) ինտոնացիա (ձայնելևէջ)

27 **Նշվածներից ո՞րը չափակշռութային (մետրառիթմական) միավոր չէ.**

1) շեշտ
2) նախաշեշտ
3) մոտիվ
4) հետշեշտ կամ թույլ վերջավորություն

28 **Ո՞վ է հայկական ազգային բալետի հիմնադիրը.**

1) Ալեքսանդր Սպենդիարյան
2) Արմեն Տիգրանյան
3) Արամ Խաչատրյան
4) Տիգրան Չուխաճյան

29 **Ո՞վ է հայկական ազգային սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը.**

1) Ալեքսանդր Սպենդիարյան
2) Արմեն Տիգրանյան
3) Արամ Խաչատրյան
4) Տիգրան Չուխաճյան

30 **Նշված բալետներից ո՞րն է ստեղծել կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը.**

1) «Չոփչոփիկը»
2) «Ձյունե թագուհին»
3) «Քնած գեղեցկուհին»
4) «Հավերժական կուռք»

31 **Ո՞վ է Հայաստանում առաջին սիմֆոնիկ նվագախմբի ստեղծողը.**

1) Արամ Խաչատրյան
2) Տիգրան Չուխաճյան
3) Ալեքսանդր Սպենդիարյան
4) Հարո Ստեփանյան

32 **Նշված երգերից ո՞րը Սայաթ-Նովայի երգը չէ.**

1) «Դուն էն գլխեն»
2) «Ես մեկ ծառ եմ ծիրանի»
3) «Քամանչա»
4) «Արի՛ ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ»

33 **Նշված երգերից ո՞րը ժողովրդական երգ չէ.**

1) «Քելե, քելե»
2) «Հաբրբան»
3) «Հարի հարալո»
4) «Անձրևն եկավ»

34 **Ո՞ր տողի բոլոր երգերն են Ռոբերտ Պետրոսյանինը.**

1) «Իմ ուսուցիչ», «Աշուն», «Զա՜ն հայրենիք», «Անձրևի երգը»
2) «Խուտուտ-մուտուտ», «Երգ մայրիկիս», «Նոր տարվա երգ-պար», «Նապաստակի երգը»
3) «Արջամուկը», «Զանգն առաջին», «Հայաստան», «Հովիվ»
4) «Հայաստան», «Ուղիղ կարգով», «Իմ ուսուցիչ», «Աստղիկների երգը»

35 **Ո՞վ է հայկական ազգային առաջին օպերայի հեղինակը.**

1) Արամ Խաչատրյան
2) Ալեքսանդր Սպենդիարյան
3) Արմեն Տիգրանյան
4) Տիգրան Չուխաճյան

36 **Ո՞վ է հայկական առաջին ազգային դասական օպերայի հեղինակը.**

1) Արմեն Տիգրանյան
2) Ալեքսանդր Սպենդիարյան
3) Գևորգ Արմենյան
4) Հարո Ստեփանյան

37 **Նշվածներից ո՞րն է հայկական առաջին օպերան.**

1) Ա. Տիգրանյանի «Անուշ»
2) Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»
3) Տ. Չուխաճյանի «Արշակ Բ»
4) Ա. Տիգրանյանի «Դավիթ-Բեկ»

38 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է բալետը.**

1) «Անուրջների լիճը»
2) «Դավիթ Բեկ»
3) «Լեբլեբիջի Հոր-հոր աղա»
4) «Խորտակում»

39 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է Կոմիտաս վարդապետի անավարտ օպերան.**

1) «Դավիթ Բեկ»
2) «Անուշ»
3) «Գայանե»
4) «Խաչատուր Աբովյան»

40 Նշել Վիեննական դասական դպրոցի ամենաավագ կոմպոզիտորին.

1) Գ. Ֆ. Հենդել
2) Լ. վան Բեթհովեն
3) Յ. Հայդն
4) Յ. Ս. Բախ

41 Ո՞ր կոմպոզիտորն է կիրառել ձայնը և երգչախումբը սիմֆոնիայում.

1) Պ. Չայկովսկի
2) Ջ. Ռոսինի
3) Լ. վան Բեթհովեն
4) Յ. Ս Բախ

42 Բեթհովենի երկը, որի հիմքում ընկած է մարդկությանն ուղղված եղբայրության ու միասնության կոչը.

1) սիմֆոնիա թ. 6
2) սիմֆոնիա թ. 9
3) սիմֆոնիա թ. 5
4) սիմֆոնիա թ. 3

43 Սիմֆոնիա բառը հունարենից թարգմանաբար նշանակում է

1) համադրություն
2) համահնչունություն
3) համաձույլ
4) համաձայնություն

44 Ի՞նչ գործիքի համար է գրված Յ. Ս. Բախի Տոկկատ և ֆուգա (ռե-մինոր) ստեղծագործությունը.

1) կլավեսին
2) դաշնամուր
3) երգեհոն
4) ֆիսհարմոն

45 **Ո՞ր նվագարանն է բնութագրում Պապիկին Պրոկոֆևի «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթում.**

1) ֆագոտ
2) շեփոր
3) թավջութակ
4) կլառնետ

46 **Եվրոպայում ո՞ր դարում է ստեղծվել ու զարգացել կոնցերտի ժանրը.**

1) XVIII – XIX դդ
2) XVII - XVIIIդդ
3) XVI - XVIIդդ
4) XV - XVIդդ

47 **Նշել կոմպոզիտորին, ով գրել է շուրջ 500 կոնցերտ.**

1) Լ. Բեթհովեն
2) Ա. Վիվալդի
3) Վ. Ա. Մոցարտ
4) Յ. Հայդն

48 **Նշել «Կախարդական սրինգ» օպերայի գործող անձանց.**

1) Պամինա, Տամինո, Զարաստրո
2) Կերուբինո, Բարտոլո, Ռոզինա
3) Կոմամդոր, Լեպորելո, Ցերլինա
4) Էբալ, Մելիա, Զեֆիր

49 **Ինչպե՞ս է Բեթհովենը անվանել իր թ. 14 սոնատը.**

1) սոնատ-էպիտաֆիա
2) սոնատ-ֆանտազիա
3) լուսնի սոնատ
4) լույսի սոնատ

50 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Ֆ. Լիստ «Հունգարական ռապսոդիա»
2) Է. Գրիգ «Նորվեգական պար»
3) Յ. Վ. Բրամս «Հունգարական պար»
4) Սվիրիդով «Ռոմանս»

51 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Ֆ. Շուբերտ «Երաժշտական ակնթարթ»
2) Վ. Մոցարտ «Օրորոցային»
3) Է. Գրիգ «Առավոտ»
4) Ֆ. Շոպեն «Վալս»

52 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Վ. Մոցարտ «Dies irae»
2) Է. Գրիգ «Օզեի մահը»
3) Ֆ. Շոպեն Մազուրկա
4) Ֆ. Շուբերտ «Երաժշտական ակնթարթ»

53 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Ա. Այվազյան «Հայկական ռապսոդիա»
2) Տ. Մանսուրյան Մենուետ «Զյունե թագուհի» բալետից
3) Վ. Մոցարտ «Լակրիմոզա»
4) Յ. Շտրաուս «Գարնանային ձայներ»

54 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Ֆ. Լիստ «Հունգարական ռապսոդիա»
2) Է. Գրիգ «Նորվեգական պար»
3) Յ. Վ. Բրամս «Հունգարական պար»
4) Վ. Մոցարտ «Մենուետ»

55 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞ր երկուսը օպերաներ չեն.**

1) «Արշակ Բ»
2) «Ալմաստ»
3) «Անտունի»
4) «Խաչատուր Աբովյան»
5) «Սևան»

56 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞ր երկուսը բալետներ չեն.**

1) «Անուրջների լիճը»
2) «Հերոսուհին»
3) «Երջանկություն»
4) «Հավերժական կուռք»
5) «Սայաթ-Նովա»

57 **Նշված եզրույթներից ո՞ր երկուսը երաժշտության արտահայտչամիջոցներ չեն.**

1) ռիթմ
2) տեմպ
3) մոտիվ
4) հնչողության ուժգնություն (դինամիկա)
5) ֆրազ

58 **Նշել երկու տարբերակները, որտեղ կառուցված են միայն մաքուր կվարտա ինտերվալներ դեպի վեր.**

1) ռե - սոլ բեմոլ, սի բեմոլ - մի բեմոլ, ֆա - սի բեմոլ
2) սի - մի, ռե բեմոլ - սոլ, դո - ֆա
3) լա - ռե, մի բեմոլ – լա բեմոլ, ֆա դիեզ - սի
4) ռե - սոլ, մի – լա բեմոլ, լա - ռե
5) սի բեմոլ - մի բեմոլ, դո դիեզ - ֆա դիեզ, ֆա - սի բեմոլ

59 **Նշել երկու տարբերակները, որտեղ թվարկված են միայն չափավոր տեմպերը.**

1) Andante, Moderato, Allegretto
2) Andantino, Sostenuto, Allegro
3) Sostenuto, Allegretto, Andantino
4) Andantino, Allegro, Allegretto
5) Moderato, Allegro, Sostenuto

60 **Նշվածներից ո՞ր երկու շարքերում են ներկայացված միայն մելիզմները /զարդահնչյունները/.**

1) ֆորշլագ, տրեմոլո, մորդենտ
2) գրուպետտո, արպեջիատտո, տրիոլ
3) մորդենտ, ֆորշլագ, տրել
4) տրեմոլո, արպեջիո, ֆիգուրացիա
5) գրուպետտո, մորդենտ, տրել

61 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները.**

1) մաք.5 + մաք.4 = մաք.8
2) մ.3 +մ.3 = մաք.5
3) մ.2 + փքց.5 = մ.6
4) փ.6 + մաք.1 = փ.7
5) փ.3 + փ.3 = փքց.5

62 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու սխալ տարբերակները.**

1) մաք.8 – մ.3 = փ.6
2) մծg.5 – մծg.2 = մ.3
3) մ.7 - մ.6 = մ.2
4) փքg.5- մծg.4 = մ.2
5) փ.6 – փ.3 = մաք.4

63 **Նշել երկու ճիշտ պատասխանները.**

1

2



3

4

5

1) Ֆելիքս Մենդելսոն
2) Արտուրո Տոսկանինի
3) Լեո Դելիբ
4) Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով
5) Կամիլ Սեն-Սանս

64 Նշել երկու սխալ պատասխանները.

1

2

3

4

5

1) Կամերային երաժշտության տուն
2) «Առնո Բաբաջանյան» համերգասրահ
3) «Արամ Խաչատրյան» համերգասրահ
4) Սպենդիարյանի անվ. օպերային թատրոն
5) Կոմիտասի թանգարան-ինստիտուտ

65 Նշել ռոմանտիզմին պատկանող երկու կոմպոզիտորներին.

1) Ա. Վիվալդի
2) Ֆ. Շոպեն
3) Վ. Մոցարտ
4) Ֆ. Մենդելսոն
5) Ջ. Գերշվին

66 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.**

Ա) «Արշակ Բ»
Բ) «Եվգենի Օնեգին»
Գ) «Ձյունանուշ»
Դ) «Դավիթ Բեկ»

1) Ֆ. Շոպեն
2) Ն. Ռիմսկի-Կորսակով
3) Տ. Չուխաճյան
4) Յ. Ս. Բախ
5) Պ. Չայկովսկի
6) Ա. Տիգրանյան

Ա	Բ	Գ	Դ

67 **Համապատասխանեցնել երաժշտական տերմիններն իրենց սահմանումներին.**

Ա) պարբերություն
Բ) մոտիվ
Գ) կադանս
Դ) ցեզուրա

1) երաժշտական մտքի կառուցվածքի փոքրագույն մասնիկը, որը պարունակում է մեկ շեշտ,
2) մի շեշտից մյուսն ընկած հատվածը,
3) պարբերության բաղկացուցիչ մաս,
4) երաժշտական մտքի հարմոնիկ եզրափակում,
5) երաժշտական մտքի շարադրման ընթացքում առանձին իմաստ պարունակող կից կառույցների բաժանման պահը,
6) համեմատաբար ավարտուն երաժշտական միտք պարունակող ամենափոքր կառույցը:

Ա	Բ	Գ	Դ

68 **Համապատասխանեցնել երաժշտական ստեղծագործությունները հեղինակած կոմպոզիտորներին.**

Ա) «Գարնանային ձայներ» վալս
Բ) «Ռապսոդիա բյուզի ոճով»
Գ) «Զյունանուշ» օպերա
Դ) «Մոխրոտը» բալետ

1) Պ. Չայկովսկի
2) Յ. Շտրաուս-հայր
3) Յ. Շտրաուս-որդի
4) Ս. Պրոկոֆև
5) Ջ. Գերշվին
6) Ն. Ռիմսկի-Կորսակով

Ա	Բ	Գ	Դ

69 **Համապատասխանեցնել գրական ստեղծագործությունները հեղինակներին.**

Ա) «Զոն Ուրախության»
Բ) «Դիմակահանդես»
Գ) «Քնած գեղեցկուհի»
Դ) «Ռուսլան և Լյուդմիլա»

1) Մ. Լերմոնտով
2) Ա. Պուշկին
3) Վ. Մուլլեր
4) Շ. Պերո
5) Ֆ. Շիլեր
6) Լ. Ռելշտաբ

Ա	Բ	Գ	Դ

70 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.**

Ա) «Դոն Ժուան»
Բ) «Ոսկե աքաղաղը»
Գ) «Ինդիանա»
Դ) «Անուշ»

1) Տ. Չուխաճյան
2) Ժ. Բիզե
3) Ն. Ռիմսկի-Կորսակով
4) Վ. Մոցարտ
5) Ն. Տիգրանյան
6) Ա. Տիգրանյան

Ա	Բ	Գ	Դ

71 **Համապատասխանեցնել սիմֆոնիաները հեղինակած կոմպոզիտորներին.**

Ա) «Պատանեկան»
Բ) Քառասուներորդ սիմֆոնիա
Գ) Հինգերորդ սիմֆոնիան, որի թեմայի մասին հեղինակը ասել է. «Այսպես է ճակատագիրը բախում դուռը»
Դ) «Զանգով սիմֆոնիա»

1) Վ. Մոցարտ
2) Է. Միհրանյան
3) Պ. Չայկովսկի
4) Լ. Բեթհովեն
5) Ա. Խաչատրյան
6) Ֆ. Մենդելսոն

Ա	Բ	Գ	Դ

72 **Համապատասխանեցնել կոմպոզիտորները՝ ազգություններին.**

Ա) Գ. Հենդել
Բ) Ֆ. Շոպեն
Գ) Յ. Շտրաուս
Դ) Է. Գրիգ

1) գերմանացի
2) հունգարացի
3) լեհ
4) ավստրիացի
5) նորվեգացի
6) իտալացի

Ա	Բ	Գ	Դ